

սաէն, քանի որ հայերը յոյներէն առաջ ծանօթացած են այս նիւթին:

Մետաքսը կը պատրաստուի թութի տերեւ ուտող որդէ մը, որ հայերէն շերամ, որ թիթեռնիկ ըլլալով հաւկիթ ածելէ առաջ իր բերնէն արտադրող խիստ նուրբ թելով մը խոզակ կը կապէ իր շուրջ: Այս խոզակն է որ յետոյ վերստին քակուելով կուտայ հում մետաքս,

Վիէննա, 1894, էջ 77-78: Հոս կ'աւելցնեմ նաեւ Հայկազեան բառարանին ծանօթութիւնը:

«Մետաքս-ի կամ ոյ-ից կամ աց, գ. որ եւ Յն. մէտաքս, մէտաքսիօս, որպէս բառօտար լեզուի, զի ըստ բնիկ Յն.ասի սիրիզօս, ի սիր, այսինքն շերամ որդունէ»:

Ուրեմն, Հայկազեանն ալ կը համաձայնի որ մետաքս Յունարէնէ հայերէնի չէ անցած եւ մետաքսին տրուած յունարէն հին բառաձեւն է սիրիզօս: Webster անգլիերէն բառարանին համաձայն լատիներէնին մէջ կան sericeous, serceus, sericum (հին անգլիացոց seric stuff), որուն զլիսաւոր նշանակութիւնը Sericus-էն բերուած է, կամ թէ Seres-ի պատկանող (Յունարէն ալ կայ Սէրէզ), որ Չինացոց տրուած անուններէն մին է: Սակայն, յիշեցնեմ որ ըստ Thos. Salmon-ի եռահատոր Modern History-ի 1739, London, Մազանդէրանի լեռներուն մէջ ի Պարսկաստան կայ Seris վայրը: Կիլան եւ Մազանդէրան նշանաւոր մետաքսի արտադրութեան տեղեր էին: Sericum-է ծագած է իսլանտացիներու Siliki կամ անկլո-սաքսոններու Seolc, Seoloc, չուէտացիներու եւ տանիմարքացիներու Silke, հուսկ արդի անգլիերէն Silk:

Հայկազեան բառարանը կ'աւելցնէ, «Թել եւ հիււք շերամ որդան, եւ կերպաս ի նոյն նիւթոյ, իբեկ, էպիւրշիւմ, հէրիբ, հարէ, արլազ: Ատեն, եթէ ի Հնդկիկս որդուսմ ծնանին գմետաքս կերպասացն, Ոսկ. ա դամ. Բ.: Հնդկային աշխարհն, ուստի գային պղպեղ, եւ մետաքս, Ճ. Ա.: Սաղարթ իւր (քքեմոյն) նիւթ է մետաքսայ, գոր որդուսմ ծնանին, յորմէ կերպասք լինին, ՄՄ. առակ. ԺԳ.: Յարդանց զագրացելոց հարստանան, յերոց մետաքս յառաջ գան, Նանայ Յնըբ.:

որուն աներկ գոյները են զլիսաւորաբար ճերմակ եւ դեղին:(1)

Արհեստական մետաքսներ ալ կան պատրաստուած բոյսերէ, խէժերէ կամ թուղթէ: Արդէն ԺԶ. դարուն մարդկութեան ծանօթ էր բուսական մետաքս:

Ե՞րբէն ի վեր ծանօթ էր հայոց մետաքս եւ մետաքսեղէն՝ ատիկա դժուար է ըսել: Փաւստոս, Մովսէս Խորենացի, Ագաթանգեղոս, Յ. Ոսկերեբան ծանօթ են եղած մետաքսին ու անկէ պատրաստուած կերպասներու: Ուխտանէս է. դարուն Հայոց կաթողիկոսարանի հարստութեանց կարգին կը յիշէ մետաքսեայ իրեր:(2) Դարձեալ նոյն թուականի վերաբերող գէպերու մասին խօսած ատեն Մով. Կաղնակատուացի մետաքսաւէջ բառը կը գործածէ(3), որ մետաքս եւ առէջ բառերէն բարդուած է: Առանց հոս աւելի երկարելու այս մասին կրնանք հաւատալ, որ մետաքսը գոնէ ծանօթ էր հայոց եւ Հայաստանի Քրիստոնէութեան սկիզբը իսկ:

Մետաքսի արտադրութիւնը եւ ճարտարարուեստը ծանօթ էր Չինացոց Քրիստոսէ 3400 տարի առաջ: Չինական պատմութեան համաձայն Քրիստոսէ առաջ 2650 թուականին Սի-Լինկ-Չաի անուամբ Չինաստանի թագուհին հնարեց մետաքս դիպակներ, որով Չինաստանածուրեանց կարգը դասուեցաւ իբր Սէ-էն-Չան, որ կը նշանակէ «առաջին քաջալերիչ մետաքսի ճարտարարուեստին»: Արդի համոզմանց համաձայն մետաքսադործութիւնը անցաւ Չինաստանէն Հնդկաստան եւ Ճափոն, իսկ մեր 552 թուականին Եւրոպա: 910 թուականին Մաւրիտացիները շերամապահութիւնը Սպանիա ներմուծեցին, իսկ Յունաստանի ու Իտալիոյ մէջ սկսաւ ԺԲ. դարուն: Մազարինի

(1) Նիւ Օրլէանցի (Մ. Ն.) մէջ բժիշկ Վարդան Օսիկեան յաջողեցաւ շերամի ուտեստին չափն ու որակը փոխելով 18 տարբեր տեսակ գոյներով մետաքս պատրաստել:

(2) Պատ. Հայոց: 1871, էջմիածին, Բ. մաս, էջ 66:

(3) Պատ. Աղուանից Աշխարհի: 1913, Թիֆլիզ, էջ 356: